


Ա Խ Ո Յ

Ա Մ Ս Ա Գ Ի Բ

Ե Զ Գ Ե Ր Ե Վ Ա Ռ Ե Վ Ե Ր Ե Վ Ե Ր
Ե Ւ Վ Ե Վ Ե Վ Ե Ր

Հ Ա Ր Ա Ր Ա Տ Ա Ր
Հ Յ Ա Ր Մ Ւ Ը Մ Ե Վ Ե Վ



Յ Ե Ր Ա Ր Ա Տ Ա Ր
Ի Ֆ Ա Ր Ա Ր Ա Տ Ա Ր Ա Տ Ա Ր
1869

Ամէ. Տ. Տ. ԽՍԹԻ Արքական Պատուիարք 16 օդի.
Գեր. Կարպատի Արքապետական Աւագ Պատուիարք
• Յանիս Արքապետական (2 օդի).

ԱՐԵԳԱԿԱՆԴՐԱՊՈՅ

Տեր Յովանիկ առաջ քահանաց Կոստանդնուպոլիս -

ԱՐԵՔՈՎԱՆԴԻՆ

Վազգեան մահաւիր Յակոբ աղջ ։
Գրիգորեան Մարգիր է Քենաչ
Ու Եռուստ թե ան Աշոքանեցը աղջ ։
Հայութան կապատիք աղջ ։
Խաղաղան մահաւիր Յակոբ աղջ ։
” Անդու Ելլոյ Ազգարքական Ընկերութեան
Հայութան կապատիք Կրիշտոնէ ։
Քենաչնիւն ան Գառանէ աղջ ։
Յակոբ ան Խագուր աղջ ։
Անդուն Գարգիրէ աղջ ։
Նեֆքեն մահաւիր Գարու է Քենաչ ։
Տեղ Գառանը ան Դ աղջուն աղջ ։

RJ-SH-6

ՀԵտեւան Արգիս այս Երազեցին

U.S. GOVERNMENT

ԵՐԵՒԱՆ ԳԱՐԱՀԱՄԱՐԸ

မြန်မာနိုင်ငြာ ဒုရိုက္ခာ အောင်

878

Անձնական Միբայցէ ազա :
Բյուլետեն մահականի Մ Առաջարկագիրքի :
Վայաշաբաթ Առաջարկագիրքի Կ միջուկը ազա :
Վայաշաբաթ Առաջարկագիրքի Գ միջուկը ազա :
Եվրասեանց Եպքարք Մ Առաջարկագիրքի :
Հայաստանի Ապրութի Պատրիարքի :
Հայաստանի մահականի Հայուսածառաւութիւն ազա :
Ասպարութիւնների մահականի Կարապէտ ազա Առաջարկագիրքի :
Տեղ և աստվածաբան մահականի Ապրութիւն ազա :
Տեղ Կարապէտ և անձնական Ապրութիւն ազա Առաջարկագիրքի :
Տեղ Սարգսաբան մահականի Նիմիզուն ազա :
Տեղ Խանական մահականի Յօհաննէս Քիքինիսիւն :
Եւ Խանական մահականի Յօհաննէս Քիքինիսիւն :

১০৮

Ward - 8-16-05: I have a question about the "Ward" in "Ward's Warbler".

2012 RELEASED

Царъ създала икона святаго апостола първомученика Феодора Тирона, която съществува до днешни дни във Великотиронския манастиръ. Икона тази е изработена отъ злато и съдържа златни иконки на апостолите Петър и Павел.

Արժանապատճե Միջայիլ վարդապետ :
Կրոգակիւմ վարդապետ :
Գարգայում մահաւոր Նեմիրով օրբերդ Պալսիկ :
Լազարով Սիթեան ազգ Եմիրանացի :
Կարագանեան Վազոն Քենեան :
Մարտիրոս ազգ Անիկի :
Յակով ազգ Մուրաստին :
Դուռեր ի որենին ան վարդապետնի :
Խափ սէլքան Գեորգի Վէյ :
Տիգրանակեանցի Յովհաննես ազգ Յանիկ Փեռու :

ԵՐԵՎԱՆ

Գիւրա սպառեան մահտեսի գրիգոր առաք:

ԵՐԱԿԱՆՈՒՅՆ

Ամենափայլ Կապիֆ Փաշայ կրուամափիք քաղցրին ։
Արժանապատի Վ թիմակէ վարդապէտ ։

Պ Պիտոս վարդապէտ ։
Ը Ըզէշ վարդապէտ ։
Խ Խաչատու վարդապէտ ։
Ա Արակոս վարդապէտ ։
Ն Նիրէն վարդապէտ ։
Վ Վասուած առուոր վարդապէտ ։
Է Էպոնափայլ վարդապէտ ։
Խ Խորեն վարդապէտ ։
Ո Ուկրու վարդապէտ ։
Թ Թագէնո վարդապէտ ։
Բ Բարդովիկէն վարդապէտ ։
Ա Ազրէնո վարդապէտ ։
Ե Եզէ կիւէ վարդապէտ ։
Շ Շվեն վարդապէտ ։
Ց Ցակրոս վարդապէտ ։
Տ Տօնէնո վարդապէտ ։

Ապրեւագ Ասհով Պալմեցի :
Մաքուտ դամսնացի աշակեր
դպրոցի :

հԵՐԱԿՈՒՄ

Գալանտութեան մահանեսի Դրիգոր ուզու Անդրէ-
Լուսառըշտկուն ընկերութեւն :
Լուսառոց ընկեր զիշերային ուսանողք :
Պատճեննեւն մահանեսի պատուան ուստ :

ԵՐԵՒԱՆ


Տեր Անաստ Աւագ քահանաց Հին Կամբոջաաւագ
Տեր Յավիշտ քահանաց Աւագինակց :

七
九

Առաջնորդ Եւդոկիոս արք. Յակոբ Վարդապետ Չամբը թթէնեան Կրիտոր աղա :

፩፻፲፭

1. Ազգական մեջ Առևտիքը պար է
Հայության մասնակի Յանձնութիւնը պար է
2. Եղիշեցի խաչակրանքը պար է
Վարդապետի և հայութիւնը պար է
Եղիշեցի պարագաները է
3. Տեղական բարձրագույնը պար է
Եղիշեցի գործադրութիւնը պար է
Եղիշեցի գործադրութիւնը պար է
Եղիշեցի պար է



Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 7.

ՅՈՒԼԻՍ 31.
1869.

Ա Զ Գ Ա Յ Ի Ն . Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ե Ւ Գ Ր Ա Գ Ի Ց Ա Կ Ա Ն

Խ Ն Գ Ի Ր

Է Ռ Ա Զ Ն Ո Բ Գ Ա Կ Ա Ն

Վ շանկից մը իրեւ լրաբաց պնուաք
 Ականասի գրիստոսի . ք . Տիմ . ք . Զ .
 Եթէ ամենան եղբայրն հեռանդութիւն
 բնակչ տա ե . մի լինիր առաջնորդ . ԵԶՆԱԿ .

Խ Ե Օ Ն Ի նախընթաց թուոյն մէջ
 կաթողիկոսական խնդրոյն վրայ խօսե-
 լով խոստացանք խօսիլ նշյալքէս առաջ-
 նորդական խնդրոյն վրայ . կատարենք
 մեր խոստումը :

Ա յ ա ջ ն ո ր դ ու թիւնը , ընդհանրա-
 պէս առնելով , շատ պարտաւորու-
 թիւններ կը պարունակէ իրեն մէջ և
 համարեա թէ ամեն կարգի անձանց
 կը վերաբերի , այն է թագաւորի , զօ-
 րապետի , հեղինակի , դաստիարակի ,
 ծնողի , հովուի և այլն . վասն զի , թա-

գաւորը առաջնորդ է հպատակաց .
 զօրապետը՝ զօրաց , հեղինակը՝ ընթեր-
 ցողաց , դաստիարակը՝ աշակերտաց .
 ծնողը՝ զաւակաց , հովիւը՝ հօտին կամ
 ժողովրդեան , և այլն . Բայց մէնք պի-
 տի խօսինք առաջնորդութեան մաս
 նաւոր նշանակութեան վրայ , այսին-
 քըն եկեղեցական առաջնորդութեան
 վրայ :

Եկեղեցական առաջնորդութիւնը
 կամ վիճակաւորութիւննը , որով կ'ի-
 մանաք հաջեւոր կամ բարոյական

տեսչութիւն մի ընդարձակ վիճակի ժողովրդեան վրայ , սկսուած է ՚Քրիստոնէութեան հետ , ինչպէս և կը կարդանք Պօղոսի առ Տիմոթէոս գրած Թղթերուն մէջ . ՚Կայոց ՚Քրիստոնէու . Թեան նոր տարածման ժամանակ առաջնորդութեան շրջանը շատ ընդարձակ է չը . իսկ յետոյ որքան որ քրիստոնէից թիւն բազմացաւ , այնքան ևս առաջնորդութեան սահմանը ընդարձակեցաւ . ՚Ե. յս իրողութիւնը աւելի յայտնի է վաղեմնի յաւնա-հռոմէական եկեղեցւոյ պատմութենէն . ՚Երբ Աշճն կոստանդիիանս իւր կայսերութիւնը բաժանեց չըրս մեծ կուսակալութիւնը քրիստոնէութեան (Préfecture) , եկեղեցական վարչութիւնը ևս օրինակ առնելով բաժանեց իւր տնտեսութեն ծանրութիւնը . զորս կուսակալութիւնը կը պարունակէին իրենց մէջ թեմեր կամ շրջաններ , թե մերը՝ եպարքուութիւններ , եպարքուութիւններ՝ քաղաքներ և աւաններ . ՚Եկեղեցին ևս , ըստ օրինակի քաղաքական բաժանման , թեմերու կամ շրջաններու մէջ կարգեց երդարք կամ եպիսկոպոսապետ , եպարքուութեանց մէջ մետրապօլիս կամ արքեպիսկոպոս , քաղաքաց մէջ եպիսկոպոս , և գաւառաց մէջ քորեպիսկոպոս .

՚Եր Հայոց աշխարհին մէջ կրոստանդեան կայսերութեան ընդարձակ նշանակութեամբ բաժանումներ եղած չեն . ՚Եր բօլոր պատմագրաց մէջ միայն Հովհաննէս կաթողիկոսն երեք մետրապօլուութեան անուն կը յիշէ . ՚Երաստից , ՚Ելետինեայ և ՚Արտիկրօսաց քաղաքի . իսկ (Օրբելիեան կը յաւելու ՚Իւնեաց աշխարհի մետրապօլուութիւնն եւս . ՚Կայ մեր առ գային միւր պատմագրիններն առ հասարակ եպիսկոպոս կամ աթոռուչ համեստ անունը կիր առած են , ինչպէս .

եպիսկոպոս ՚Կադրեանդայ , եպիսկոպոս ՚Արևնեաց , և այլն , որով պիտի հասկնանք նոյն տեղուցն առաջնորդը կամ վիճակաւորը . և յայտնապէս կ'երեկ որ առաջնորդական աեւչութիւնը որոշուած էր ըստ գաւառական և մերթ ըստ նախարարական բաժանման Հայաստանի : Հյետին դարերուն մէջ թէկ Հայաստանի քաղաքական վարչութիւնը հարուածներ և փոփոխութիւններ կրեց , ուրիշ ազգաց ձեռք անցաւ և թագաւորական իշխանութեան հետ նախարարական տանուտերութիւններ կրեց , ուրիշ ազգաց ձեռք անցաւ , սակայն Հայաստանեաց եկեղեցւոյ հայրապետական տեխնութեան հետ՝ առաջնորդական տեխնութիւննեն և միացին անխախտ , միայն ըստ տեղականութեան փոփոխութիւններ կրեցով և այ ըստ էութեան : ՚Երաջնորդական ընդարձակ երկիրներէն շատերը նուառ զեցան բնակիչներէ , շատերը աւերեցան և ժողովուրդը տեղափոխութիւններ կրեց , և ըստ այնմ առաջնորդական տեխնութեան սահմանը սեղմեցաւ կամ ընդարձակեկիցաւ , ինչպէս որ վերջին ժամանակներս անդամ ոյն օրինակ տեղական փոփոխութիւններ եղած են և կարող են լինիլ ազգային վերջութեան և վիճակային ժողովրդէ հաճութեամբ :

՚Ակայն թէ որքան են մեր արդի առաջնորդութիւնները , և օրինաւոր են արդեօք իրենց բաժանումները . ՚Եկ ոչ , առայժմ մեր ուշադրութիւնը գըրաւողը այս կէտը չէ , այլ բուն առաջնորդական տեխնութեան եղանակը , վեճակը , առաջնորդի ընտրութիւննը , անձնաւորութիւննը , ժողովրդի հետ աւելացած յարաբերութիւնները , և այլն . Հայաստանեաց եկեղեցւոյ առաջնորդական տեխնութեան եղանակը գըրիսաւորապէս երկու ձիւզի կը բաժնուի :

Տաճկաստանի և Այուսաստանի և
 Այուսաստանի առաջնորդական տես-
 չութեան շրջանակը խիստ սահմանա-
 փակ է, վասն զի առաջնորդը քաղա-
 քական իրողութեանց մէջ խառնուե-
 լու ամենեւին իրաւունք չունի և իւր
 ներքին վարչութիւնը կը կառավարուի
 կրնախառորդի (թեմական ատենի) ձեռ-
 քով, որոյ անդամներն ենեղեցական
 են, բաց ՚ի առաջնադպրութիւն, որ տէրու-
 թեան պաշտօնէից կարգէն կը համար-
 ուի, ըստ որում նոյնի խի կրնախառորդը
 տէրութեան պատասխանառու ատեան
 կը սեպուի: Խոկ Տաճկաստանի առաջ-
 նորդական տեսչութեան սահմանը ըն-
 դարձակ ՞ն Այաջնորդը իւր ժողովը-
 զի ամեն տեսակ շահուց և բարօրու-
 թեան համար կարող է տէրութեան
 քաղաքական ատեաններու ներկայա-
 նալ և խօսիլ ինչ որ պարտ և արժան է:
 Այս պատճառաւ Տաճկաստանի մէջ
 առաջնորդը շատ մեծ նշանակութիւն
 ունի ժողովրդի համար: Այս առաստանի
 մէջ առաջնորդի հաստատութիւնը
 կամ ժողովրդութիւնը մեծ մասմբ տէ-
 րութեան ձեռքին է: Խոկ Տաճկաստա-
 նի մէջ, ըստ վաղի մի սովորութեան,
 այս իրաւունքը ժողովրդին և զգդային
 վարչութեան կը պատկանի: Հետե-
 ապէս Տաճկաստանի առաջնորդական
 տեսչութեան եղանակը նախնական է
 և քրիստոնէական կիրղեցւոյ տնտե-
 սութեան ոգւցոյն համապատասխան:
 բայց գժրազդաբար ժամանակին պա-
 հանջան գործնական օրինաւորութեան
 և կանոնաւորութեան կողմէն զուրկ և
 միանդամայն մեծամեծ զանցաւութեց
 ենթակայ է: Դրկայ առաջնորդական
 կամ վիճակային ժողով և խորհուրդը չը
 կայառաջնորդական գործոց արձանագ-
 րութիւն: շրկայ առաջնորդական գոր-
 ծոց համարաւութիւն ժողովրդի կող-
 մէն այլ ամենայն ինչ ըստ կամ վաս գիրք

ուածի ապաստան է: Այս անորոշ դրու-
 թեան առթիւ է, որ միայն մի լրկ նամա-
 կագրի ձեռքով առաջնորդ մի երբեմն
 մինչեւ երկինք կը բարձրանայ և կը
 ջատագովուի և երբեմն մինչեւ դը-
 ժոիքը կ'իշնէ և կը պարսաւուի: խիկ
 ազգային վարչութիւնը, ըստ որում
 ինքն անտեղեակ է առաջնորդի գոր-
 ծոցը, կըստիպուի առաջնորդական և
 հակա առաջնորդական յուզմունքնե-
 րու մէջ երերիլ և տատանիլ, մողաք
 վուրդը անտերունչ թողուլ և առաջ
 նորդը Պօլիս կոչել, մէկ տեղին ամէ
 բատանուածը՝ մի ուրիշ տեղ կար-
 գել, և պատիս շարունակ խոսովու-
 թեանց և փոփոխութեանց մէջ ծփակ-
 և տատանիլ: Այս աջնորդական աեռ-
 չութեան այս տիսուր վիճակը այսօք
 այնքան յայտնի է ամենուն, որ երկարա-
 բէն նկարագրելու կարեւորութիւնը չկայ:

Պահնք ուրիշն առաջնորդական ըն-
 արութեան մասին խօսելու:

Այս աջնորդական ընտրութիւնը +
 զօր կիրղեցին միշտ ժողովրդին վերաւ-
 պահած է, այսօք խիստ մեծ անպատե-
 հութեան ենթակայ է: Ժողովուրդը
 կամ բոլորովին չը մասնակցիր առաջ-
 նորդի ընտրութեանը, և կամ կը մաս-
 նակիր բոլորովին թիւր ճանապարհաւ: Հ
 յողովրդէն շատերը փոխանակ բա-
 րոյական վեմ յատկութիւններ վենա-
 ւելու առաջնորդական անձի մէջ, քա-
 զարգացիութիւն կը վնասեն, բայց
 թէ ինչ կը հասկնան քաղաքագիտուու-
 թիւն ասելով, հակասութեանց հա-
 կասութիւնը այս տեղ է: Մինչք քա-
 զարգացիութիւն ասելով կը հակը-
 նան բարեւելու, բարեւ տալու, նո-
 րածեւ շարժումներ ընելու, շատ ո-
 յներ ասելու, քանի մի լեզուներով
 թոմովիլու, և այլ այն տեսակ վար-
 մունքներ: Ոմանք քաղաքագիտուութիւն
 ասելով կը հասկնան գալու հաց-

ռւելու, ռւատելու, իսմելու, շատ փաք, բաւորներ և ծառաներ պահելու և այլ նմանօրինակ սովորութիւններ. Իսկ ոմանք, որ ամենէն ցաւալին է, քաղաքագիտութիւն ասելով կը հասկընան ճարտարամոռութեան, հնարադիտութեան, սուտը՝ ճշմարտի, անիրաւը՝ իրաւի անզ վաճառելու վարպետութիւնները Անչգեւու, այս կարծեցեալ քաղաքագիտութիւնները ոչ միայն փնտուելու և գովելու, արժանի յատկութիւնները չեն, այլ և եկեղեցականի համար բոլորովին գատապարտուած են.

Ուստի, ժողովուրդը իփստ շատ կը շահուի, եթէ իր ջմացած և չհասկացած յատկութիւնը, որ է քաղաքագիտութիւնը, ըստինուէ առաջնորդացու անձին վրայ, այլ նորա փոխարէն փնտուէ ժողովուգափրութիւն և արդարասիրութիւն, որ ինքնին կարող է ճանաչել. Ժողովուրդը կարող է ճանաչել առաջնորդի ժողովուգափրութիւնը, երբ կը առենէ որ իր անձին համար ըստ հոգար առաջնորդը, այլ իր հօտին համար. Երբ կը տեսնէ որ անձնանութիւնը առաջարար վիշտ և տառապանք կը կրէ ժողովրդի իրաւունքը պաշտպանելու համար. Երբ կը առենէ, որ որբը այրին և աղքատը հաւասարապէս կը միիթարուին նորա հայրական ինամբ քով. Ժողովուրդը կարող է առաջնորդի արդարասիրութիւնը ճանաչել, երբ կը տեսնէ, որ առաջնորդը մեծարանէ և աղքատին մէջ խորսութիւն չը դներ, այլ հաւասարապէս կը իրաւունք և կը յանդիմանէ, զգիւնելուն պաշտպանայ, կաշառակերութեամբ և զօշպաղութեամբ չը մեղանչը իրաւունց, օրինաց և պատկառելի սովորութեանց դէմ, և այն. Ժողովուրդը պարտական է իմանալ, որ ժողովրդասիրութիւնը և արդարա-

սիրութիւնը առաւել բարձր կատար բերութիւններ են առաջնորդի համար; քան թէ քաղաքագիտութիւնը վասըն զի ժողովրդասիրութիւնը մարդը դիւցազուն կ'առնէ և արդարասիրութիւնը կը յաղթանակէ ամեն կարծուած քաղաքագիտական ճարտարամը տութեանց: Վրաշնորդը թող սիրէ ժողովուրդը և յարդէ ու պաշտպանէ իրաւունքը, այնու հետեւ քաղաքագիտութիւնը իրեն կը հետեւի և ոչ թէ ինքը քաղաքագիտութեան: Ժողովուրդը կարող է բաց յայսմանէ ու ըրիշ աւելի տեսանելի արժանաւորութիւններ վնառուել առաջնորդացու անձին վրայ՝ ժողովրդներու և եկեղեցիներու պայծառութեան նկատմամբ և մատաղ սերունդի գասափարակութեու նոյն իսկ ժողովրդի հոգեւոր միսիթարութեան նկատմամբ, թողունքուիշ քանի մի առաջնորդական յատկութիւններ եւս, որոց վրայ յետոյ պիտի խօսինք:

Կայս պիտի ասուի մեզ թէ ժողովուրդն Բնչգեսէ կարող է առաջնորդական օրինաւոր ընտրութիւն առնել, քանի որ մեծ մասամբ իր եկեղեցական պաշտօնեայքը իրեն համար անծանօթ են: Վրա իրաւացի է. բայց չը գիտենք թէ յանցանքը որուն վերագրենք, ժողովրդին, թէ եկեղեցական վարչութեան:

Որքան եպիսկոպոս և վարդապետ, որքան քահանաց և սարկաւագ կան ազգի մէջ. — ովլ գիտէ, Ի՞նչ վարք ու բարք և ի՞նչ ուսմունքու պարտազմոնք ունի իրաքանչիւր եկեղեցական պատասխանայ. — ովլ գիտէ: Որչափ գիւղեր կան որ առանց քահանացի են, և որ քան քահանացի և վարդապետներ կան, որ մօւրացկանութեամբ թափառական կը շրմին. — ովլ գիտէ: Որքան օրինաւոր վարդապետներ կան և որ

վանքերու անկիւններու անցայտութեամբ մէջ կը մնան և որչափ մնապարծ և ինքնացոյց անձինք կան + որ քաղաքներու մէջ քարոզութեան և առաջնորդութեան պաշտօններու կը հետամբ տեն . . ով գիտէ և լոյս այսպէս լինելէն յետոյ զարմանալի չէ ուրեմն, եթէ արժանաւոր և համեստ մարդիկ շատ անգամ յետ կը մնան, և անարժան ու ինքնացոյց անձինք յառաջ կ'անցնին և զանազան պաշտօններ ըստանձնելով ժաղովուրդն ու վարչութիւն կը յագնեցնեն . .

Ըստ եթէ ամբողջ եկեղեցականաց թիւը, բարցական և ինքանական վիճակը, որ վմնուց միաբանութեան պատկանիլը, ինչ արժանաւորութիւն ունենալը և այլ այսպիսի ծանօթութիւնները Ազգին յայտնի լինէին + միթէ այժման անհաջո իրողութիւնները և անուանարկութիւններն ու խռովութիւններն պիտի լինէին . . .) Ենք չենք կարծեր, վասն զի այն ժամանակ ընտրութիւններն և գործողութիւններն գիտութեամբ կը կատարուեին և ոչ թէ այժմեան պէս անգիտութեամբ . . .) անաւանդ այս մի կարծիքն եւս ունինք, որ եթէ ամեն առաջնորդական անձինք որ և իցէ վանքի միաբանութեան պատկանէին և ըստ ամենայնի ապահով լինէին, որ առաջնորդութենէ ենթէնքն յետոյ անշուշտ պատրաստի հաց և հագուստ պիտի ունենային, այնքան կաշառակերութեան, սիմնականութեան և այլ յափշտակութեանց մէջ չենք զառանանիր, այնքան ցած միխրապաշտութեամբ չենք չըդրութեր մեծատունները և արհամարհեր աղքատը և տնանկը, արդարութեան և իրաւանց համար կը լինէին նախանձափնդիր, տէրութեան ատենից մէջ համարձակ և պաշտօնէ հանուելու մասին անհոգ, որովհետեւ ապահով

կը լինէին + որ խաներու անկիւնները չը պիտի տառապին և ՚ի դրունս մեծամեծաց չը պիտի գեգերին; այլ ուղղակի իրենց միտրանական վանքը պիտի քաշուին, ուր մի կտոր հաց և սենեակ պատրաստէ իրենց համար. Մրգաբեւ մենք կը հաւատասանք, որ անշահասիրութիւնը արդարասիրութիւնը և այլ գեղեցիկ յատկանինները կրծութեան արդիւնք են և ոչ արտաքին հանգամանցներու, բայց այն պիտի պարագաներ՝ կան, որ տէարմարդկանց շահասիրութեան եւ անիրաւութեան պատճառ կը տան, իւստի եկեղեցականաց և աշխարհականաց մէջ փոխադարձ սէր, յարդ, պատիւ և աջակից գործունէութիւն և ազգաշինութիւն յառաջնանելու համար՝ ամեն պարագաներ դիտելու, քննելու և այնպէս տնօրինելու է . . .

) Ենք տսկաւին շրդիանք թէ վերաբնաւլ) ահմանադրութիւնը բնիւ պայմաններ կը պարունակէ առաջնորդութեանց նկատմամբ + բայց որովհետեւ առաջնորդութիւնը խիստ կարեւոր և փափուկ ձիւլն կը համարուի մեր Ազգային վարչութեան, աւելլորդ չենք գատիր մեր համոզումը յայտնել այս մասին . . .

) առաջնորդական տեսչութեան շըրջանին մէջ պատահած անտեղութիւններն ազատ համար կամար՝ հարկ է անշուշտ . . .

) իր առաջնորդն վիճակային ժաղավրդի միաձայն հաւանութեամբ ընտրած ժողով լինի, թեմական գործերու վրայ առաջնորդի հետ խորհելու և անօրելու . . .

) իր յիշեալ ժողովը իր մէջ առանձին ձիւղեղամբ կամ ուսումնական խորհարդ քանինեայ յատկապէս դաւառապ

կան կամ վիճակային դպրոցներու բառ
թեկարգութեան և յառաջադիմուա
թեան մասին հսկելու ։

Որ երկու ժողովները առաջնորդի
հետ միասին տարին միանգամ վիճակոց
ին գործառնութեանց մասին հաշիւ
տան ժողովոդին և նոյն հաշիւը ու-
ղարկեն Վզգային վարչութեան ։

Որ ամեն ձեռնադրութիւնը ժողո
վորդի հաւանութեամբ և Վզգային
վարչութեան գիտութիւնը կատաւուի ։

Ենք նշանակած պայմաններէն յայ-
տնի է, որ մեր գլխաւոր նպատակն է ամ-
բացընել ժողովոդի յարաբերութիւնը
առաջնորդի հետ և առաջնորդի յարա-
բերութիւնը՝ Վզգային վարչութեան
հետ, որ մեր Եկեղեցւոց վարչական ըս-
կը ըստունիքի բուն արմատը և այս յատ-
կութեան մէջ կը կայանայ. և այս ընդ-
հանուր զաւակոց սերտ միութեամբ է,
որ կարացեր է դիմադրաւել շատ արհա-
ւիրներու և փոթորիկներու ։ Երբ ժո-
ղովութիւն եկեղեցականաց աջակից գոր-
ծակցութեան ու սիրոյ կապը ամրաց-
նայ. այնու հետեւ կը վերանան այն
նորամոււտ աղաղակները, որոնք վեր-
ջին ժամանակներս անխորհրդաբար
կը կրկնուին թէ Կղերը Վզգին կը վե-
նասէ; Կղերը յառաջադիմութեան ար-
գելք է, կղերը անպիտան է, և այն
և այլ: Վրամանուա անուանեցինք այս
աղաղակները, որովհետեւ Հայու բը-
նական աղաղակները չեն, այլ Եւրո-
պայի մէջ պապական կղերի գէմ կրտկ-
նուած աղաղակներու արձագանքն է.
որ այսօր մեր Վզգին մէջ կը կրկնուի տա-
րագէպ: Տարագէպ ասացինք, որովհե-
տեւ մեր աղգային եկեղեցականու-
թեան և պապական կղերականութեան
մէջ ահագին անդունդ կայ: Պապական
կղերը ժողովութականութենէ արտաքոց
մի առանձին հզօր մարմին կը կազմէ և
ժողովութիւն կը մաքառիսիսկ Հայ ե-

կեղեցականութիւնը ու զզակի ժողո-
վութէն կը բխի և ժողովութիւն կափում
ունի, կամ, լաւ ևս է ասել: ժողովութիւն
հետ մի մարմին կը կազմէ հայրական
և որդիական առնչութեամբ: Պա-
պական կղերի պատմութիւնը երկար
դարերէ անտի մի յարատեւ պատե-
րազմ եղած է ժողովութիւն զարդացման և
ազատութեան և բաւարութեան
գէմ: իսկ Հայոց մէջ համարեա թէ
եկեղեցականները եղած են ուսումնա-
սիրութեան և գրագիտութեան առ-
աջնորդ ժողովութիւն ։ Պապական կղե-
րի կրթութիւնը, վարմունքը, միաձեւ
համամտութեան մէջ ձուլուած է: իսկ
մեր եկեղեցականներէն իւրաքանչիւրը
առանձին գաղափարի և առանձին ըն-
թացից տէր է, և հետեւ ապէս բոլորու-
մին անկարող առանձին կուսակցու-
թիւն կազմելու ժողովութիւն գէմ: Առա-
տի և մեր եկեղեցականութիւնը պա-
պականութեան նմանեցնելը և քարկո-
ծելը բարորումին անտեղի է: Եթէ վեր-
ջին ժամանակաց մէջ մեր եկեղեցակա-
նութեան փայլը նսեմացած է և այս առ-
գային վիճակի աղէտակից հետեւանքն է:
որուն ենթակայ է նոյն բնքն ժողովութ-
ուը: Լարձ ասենք մեր Եկեղեցւոց ոգո-
ւոցն նայելով, որ եկեղեցական պաշ-
տանէից ընտրութիւնը ժողովութիւն կը-
վերագրէ) եթէ եկեղեցականաց մէջ՝
անվայել ընթացից տէր անձինք ես կան,
պատասխանատուն մենք դարձեալ ժո-
ղովութէը կը համարենք, որ իր ընտրո-
ղական պարտաւորութեան մէջ բոլո-
րումին անհոգ է, և միայն գանցատե-
լու և բամբասելու հակամիս: Վայ ա-
սելով մի գուցէ կարծուի թէ մենք կ'ու-
զենք արդարացնել որ և իցեւ եկեղեցա-
կանի թերութիւը և ընթացքը քաւ լի-
ցի, մենք այնշափ վեւ մինդիր ենք այդ
մասին որ ՚ի բոլոր սրտէ կը փափաքէնք,
որ ամեն տեղ եկեղեցականը իրենց

դատավիճակ իրենց անպիտան պաշտօն սակայի ընթաղից դէմ, եկեղեցական ուժութեան առ պատիւը պաշտպանէին և թերութիւնները ուղղել ջանային, որպէս զի մէկի յանցաւորութեան պատճառաւաւ անխտութեար ամենքը ըստ դատապարտւէին, ինչպէս որ յաճախ կը տեսնենք ներկայ ժամանակիս մէջ:

|| Ենք այնպէս գիտենք, որ եթէ
ժողովուրդը իր լնտրօղական պար-
տուց՝ և եկեղեցականները իրենց վկ-
ած մշկումն մէջ միախորհուրդ և մի-
աբայլ լնմանային երթէք այն սառնա-
պրատութիւնը տեղի լցավիսի ունե-
նար, որ այսօր կարծես. թէ նշան-
ութիւնի կը լլիմի ժողովոդի և եկեղեցակա-
նոց մէջ. ‘Կարծեալ կ’ասենք շեշտե-
լով, որ եթէ ժողովոդականը և եկե-
ղեցականը քաջ հասու լինեին իրար
հետ ունեցած փոխադարձ յարաբե-
րութեանը և պատասխանատու ութե-
ցը, երբէք, բնաւ երբէք չչին արձա-
դանգ տար մեր Ազգին մէջ այս տառ-
բաձայն աղաղակները թէ կղերը անպի-
տան է, կղերը վեասակար է և այլն.
Պատասխանատու ութեցը և այլն.

թաղունք այս ընդհանուր կետերը և գարձեալ առաջնորդութեան խնդրոցն գալով խօսինք առկա ինչ առաջնորդի կատարելու թեանց եւ պարտուց վրայ և վերջ տանք ներկայ գրուածքին :

Առաջնորդի անձը բարեզարդող
կատարելութիւնները կամ առաքինու-
թիւնները պայմանագիր կը թուարիկէ Պօղոս
առաջեցալն՝ անդարբանին երդութիւն-
շախութիւն, պարտիշաբանին, հոգութիւն-
ին, ուստացչաբանին, հանդարբանին, ա-
նձնականին (1), առաջնորդութիւն, յե-
ժարութիւն, հասար, իրավահարութիւն, ուր,
համեմերտին հաջանանաց և չարչարա-
նաց (2), և մանաւանդ աղնութիւն վա-

բանք քարոզութեան առետարանական
բանից և Պօղս առաքելց պատուիրած
առաքինութիւնները խիստ գեղեցիկ
կերպով բացատրած է մեր Շնորհակի
հայրապետը իր Ծեղհանրականի այն
թղթայն մէջ, զոր ուղղած է յանուն
առաջնորդաց ։ Եթաշնորդական պար-
տաւորութեանց փոյս խօսած է յատկա-
պէս և Ասհակ Պարթև երանելի հայ-
րապետը իր ընտիր կանոնադրութեան
մէջ ։ Ա ասն որոց և մենք սոյն ընտիր
հայրապետաց երկասիրութիւնքը մատ-
նունիշ առնելով իրին ուստամափրելու-
գեղեցիկ նիւթ առաջնորդական պար-
տաւոց նկատմամբ՝ համառօտենք մեր
առնելիքները ։

Ժաղղովուրդը կարսդէ ունենալ տեսակ աեւակ վշտեր և հիւանդութիւններ ։ Թէ մարմնական և թէ հոգեկան, թէ արասպին և թէ ներքին։ Դրսաքին վշտերն են հարստահարութիւնք, աղքատութիւնք, հիւանդութիւնք և այլ ձախորդութիւնք, այս պարութքաջեցի լինի առաջնորդը, որ ոչ միայն վշաակից ժողովրդին, այլ եւ զանայ միխթարել, նոյն վշտերուն եւ տառապանքներուն դարձնան և սփռափանք։ Հայթայթելով՝ Ժողովրդի մէջ կարեն գտնուիլ ներքին հիւանդութիւններ, ինչպէս են մոլութիւն, ագիտութիւն, սնապաշտութիւն, ու գի ասելութիւն և խոռովութեան, ու գի զրկողութեան ընկերին և այլ սոյն տեսակ քարցական ախտեք, որոնք, եթէ երկար ճարակին, կարող են իսկ պատ պապիսնել ժողովուրդը, բարոյ պայտո անդամալունել, ի՛ վերջա մեռնել և անունը բառնալ մարդկային սեռի ապագայ սերունդի պատմական ազգահամարեն։ Ժողովրդի անդամոց մէջ կարող է սպրդիլ կասկած թերու, հաւատութեան, կրօնական անտարքեր, որութիւններ, և յուասահատութիւնն, ու

(1) U.S. Surr. q. 2-3.

◎ A. 840, 9. 10—11.

բով հաւատոյ հիմունքը կը քայլացուի, և հարիւրաւոր շարիք՝ կը հորդեն ՚ի կործանում ընկերականութեան ։ Առաջի առաջնորդի ամենամեծ պարագն է ժողովրդի այս ամեն ներքին հիւան դութեանը զատակցիկ և ամեն ջանք և խնամք ՚ի դոք դնել այն օրինակ ախտաւորութեանէ ժողովրդը սրբելու և ազգանելու ։ Վ ասն զի այս տեսակ ախտաւորվ վարակուած ժողովրդը շարունակ բարսական գերութեան մասնուած կը մնայ ։ և եթէ ջըմաբրուի, կարող չէ երեք ճշմարիստ աղասութեան վայելէլ ։ Ճշմարիստ կ'ասենք, այն մարդը որ ժողովրդեան այս ցաւերը ոչ կը զգայ և ոչ կը ցաւի, աւելի լու է որ առաջնորդութեան նուի րական պաշտօնէն բորբոքին հեռու գտնուի և իւր անձը դատապարտութեան ընմատնէ, ինչպէս կը պատուիրէ լընիկ ։ « Եթէ ամենայն եղարցն հիւանդութիւն քեզ ոչ ցաւ է, մի լինիր առաջնորդ ո ։ Վ ասն զի, առաջնորդը այն ժողովրդական հոգին և զգացմունքը պիտի ունենայ, որ առանց իւր իսղձէն և ժողովրդէն յանդիմանուելու՝ կարենայ համարձակ ասել ։ » Ո՞սք ՚ի ձենջ հիւանդանայ և ես ոչ հիւանդանամ ։

(1) Եր առաջնորդներէն շաաերը փոխանակ ժողովրդի տառապանացը ըստ փոփանք մատուցանելու՝ նոյն իսկ ինքեանք ամեն կերպով տառապանք կը լինին ժողովրդի համար և Փոխանակ ժողովրդի հետ միանալու և արտաքին արհաւիներուն դիմադրելու, ինքեանք ժողովրդի գէմ կը զինին և կուսակցութե կիրքերով կ'երկապառակեն ժողովրդի եղարցրական և քրիստոնէայ կան միութիւնը ։ Ը ասերու անձնասիրութիւնը ըստ գրգռելու համար չենք ուզեր ականէ յանուանէ յիշապակել ամեն բան ։ Բայց ՚ի հարկէ հայ ըս-

րադրաց ընթեցողներուն արդէն ծանօթ են վերջին քանի մը տարուանս մէջ տեղի ունեցած առաջնորդական և ժողովրդական հակառակութիւնները իւրինց այլանդակ հետեւ անդներով ։ Ո՞ւնք գիտենք և ականէ յանուանէ կը ճանաչնք առաջնորդական անձներ և որոնք իրենց հօտի համար իրենց անձը գնելու պատրաստ են, բայց գիտենք և այն պիսիքը որոնք իրենց անձը միշտ վարձական համարած են, միշտ անփայթ, եղած են և միշտ այլ ընդ այլց մտած և ելած են վարպախի գոռնէն։

Երդ՝ եթէ մեր Երդը վարչական մի փափուկ պաշտօն ունի, այն առաջնորդութիւնն է, և մեր եկեղեցականութիւնը եթէ մի գլխաւոր միջոց ունի ժողովրդեան համակրութիւնը գրաւելու՝ դարձեալ առաջնորդութիւնն է, վասն զի տուաշնորդութիւնը բոլորովին ժողովրդային պաշտօն է։

Միօնը, որ կրօնական օրագրի նը շանաբան կը կրէ, ՚ի բոլոր սրաւէ կը փափաքի, որ առաջնորդական վիճակները օրինաւորութեան տակ դրուին առաջնորդները աշխատին քանիր և գործով բարի օրինակ լինիլ հօտին, որպէս զի, Նայ եկեղեցականութիւնը կարենայ օր աւուր կատարել այն նույնիւրական պարտքը, որուն համար ուխտած է Եստուծոյ և մարդկան առջեն, որ է Եկեղեցոյ կամ Եստուծոյ Գերդատաստին մէջ յառաջացնել աստուածային ընորհաց, ճշմարատութեան և մարդափրութեան թագաւորութիւնը ։

ԽՈՐՀՐԴԱՌՈՌԻԹԻՒՆ

Նախնի եւայժմեան Հայր հարատահարութեան դէմ : Նախնի Մշեցի քաջունի :

Ըզգային պարբերականները բաւական ժամանակէն ՚ի վեր անընդհատ կը հրատարակեն (Պուշի, Վանայկարնոյ և այլ գւառառաց հարատահարութիւնները և կրօնի ու մարդկային պատուց դէմ եղած սոսկալի արարքները, որոնք վայրենի Վիւրտերուձեռքով կը գործուին ՚ի մեաս և ՚ի նախատինա Հայ ժողովրդեան : Վ.յ. անցքերը, որոնք իրենց վայրագ երեւութով ոչ միայն զգայուն Հայուստի խորքը կը շարժեն, այլ և մարդկային պատիւը ճանաչող օտարականի հոգին եւս ՚ի վրէմինդրութիւն կը վասուեն. այս անցքերը, որոնք վերջին ժամանակս գրաւած են (Ճամանեան կառավարութեան մոտադրութիւնը և որոց մասին հետպհետէ տնօրէնութիւններ կը լինին, այս անցքերը իրենց աղքած սաստիկ տպաւորութեամբ մի տիսուր խորհրդածութեան կը հրաւիրեն զմեղ :

Այդ կը պատիվերայններ մեզ հին և նոր հայութիւնը իրենց բոլոր գրծագրութեամբ, մի խորին թափծութիւն կը ափիէ մեր սրտին վրայ, Վասին զի՞ կը տեսնենք, որ Վիւրտերու հարատահարութիւնները (Յուսուփի, Խուզայի, Թեմուրլանգի, Զինգիանինի և Շահաբասի աւերմունքներէն՝ աշուելի չեն, որով Հայոց աշխարհը մերթ ամայացաւ հրիփութեամբ և գերութեամբ և մերթ ողողեցաւ արեամբ : Կը տեսնենք որ Վիւրտերը Հայոց աղքէն բազմաթիւ չեն, բայց կը վշատինք, երբ համեմատելով կը տեսնենք միանդամանցն որ նախնի հայութիւնը սոսկալի արհաւիրներու

դիմագրաւելու հոգի կը կրէր, իսկ այժմեան հայութիւնը անարիւն և անկենդան դիմակի կրնմանի : Հին հայութիւնը իւր պատիւը իւր կրօնի սրբութիւնը պատերազմին կը մեռնէր կաշտին վրավազի դաշտին վրայ և արիւնահեղ համաժանքներու մէջ . իսկ այժմեան հայութիւնը թեթևամիտ տղայի նման միայն կ'ողբայ և կը ճշայ և կամ ընդարմացած ծերունիի նման լոկ անէծքներ կը կարգայ : Հին հայութիւնը պատուով մեռնելը անպատիւ կեանքէն հարիւրապատիկ անգամ աւելի նախապատիւ կը համարէր իսկ այժմեան հայութիւնը ստրկական ցածութեամբ իւր պատիւը կը զոհէ իր առօրեայ կենաց պատսպարութեան համար : Հին հայութիւնը կը տագնապէր, բայց կը գործէր . իսկ նոր հայութիւնը կը տագնապի . բայց միայն կը խօսի : Վ'ն ահապին անդունդ հին և նոր հայութիւնն մէջ ազգային և կը ըօնական պատուց նկատմամբ : Հին հայութեան պատմութեան մէջ արիասրտութեան և կրօնասիրութեան դիւցազնական գեղեցիկ օրինակներ կը կարգանք և կը միսիթարունք . իսկ մեր զաւակները պիտի պատկառին մեր այժմեան հայութեան պատմութիւնը կարգալով . պիտի պատկառին, երբ կարգան, որ Հայու պրութիւնը, Հայոց ամուսինը իւր առջեւ անարգուեր են խումբ մի Վիւրտ ելուզակներէ, և Հայոց իբրեւ անզգայ անարիւն և անսիրտ արարած՝ անշարժ և անմուռնը նայած է . Պիտի պատկառին, երբ լսեն, որ գւառառական Հայու իրենց մարդկութեան և աղքատութեան պարտը կատարած համարած են միայն ողբախառն նամակներ և տեղագրութիւններ ուղղելով Պօլսաց աղքային Վարչութեանը, և առ երգեմն անսկապրութեան սաղով և երգեմն

Մայն կառավարութեանը իմացնելով կարծերէ և թէ լրում տուած է օրինաց և մարդարէից : Ա այս թշուառ պատմագրին, որ պիտի սահպուի իւր ազգի ներկայ ցածութիւնը, տղայական ողբն ու կոճը, Քիւրութիւնը հաջոյից սարկանալը և մանաւանդ անսիրա և անզգայ մարդկութիւնը պատմութեան մշջ առնուլ և ապագայից աւանդել :

Թօնը ամենեւին ընեղանան մեր գաւառական ազգայինք, մանաւանդ Ոյուշի և Վանայ Հայք, մեր իսխատ Խոսքերէն, վասն զի երբ իրենց նամանէ ները և տեղագրութիւնները կը կարդանք ըստքաց մէջ, որչափ որ կը սրու մանիք Քիւրսերու բարբարոսութեան դէմ, այնշափ եւս արդար ցասմամբ կը սրտմոնիք իրենց ցածութեան և սառնապատմեան դէմ և կըստիպուինք խորին թափնութեամբ իմաստափել, որ կամ հայութիւնը խազառ մեռած է գաւառաց մէջ և կամ նամանկաց և տեղագրութեանց պարունակութիւնը չափազնց է և անսասց : Վասն զի, երբէք կարող ընկը երեւակայել, որ մարդու կրօնական և ընոտ մնեկան պատիւը իւր առջեւ չարաչար ոտնահար լնի և ինքը նայելով և վըսանալով միայն գոհ լինի : Այս կրօնասիրութիւն և մարդկութիւն չէ, այլ կատարեալ անզգայութիւն, կատարեալ մեռելութիւն :

Դուցէ հարցուի մեզ թէ ինչ կարող են առնել գաւառական Հայերը Քիւրսերու բարբարոսութեան դէմ : Կինդանութիւն, արիւն և սիրու ունեցող մարդկանց համազ յայսնիք արդէն այս հարցման պատասխանը, և մէնք բացառութեաւը կը համարինք, վատըն զի կրօնասիրութեան և ազգասիրութեան բաշագագործութիւնները հարց ու պատասխաններով և փաստաբա-

նութիւններով չեն վճարուիր, այլ պրտով և եռանդով : Խակայն սառնաւ սիրուններու սիրու անզգամ ջերմացնելու համար և հայկական հին կենաց գեղեցիկ օրինակով նորերու անզգայութիւննը յանդիմաններու համար արժան կը համարինք ոչ թէ Աչեցի հին տղամարդի, այլ կին մարդոց արիապատութիւնը յառաջ բերել, որուն ականատես եղած է պատմին ինքըն թավմայ Անձորեցին :

“ Ի այս զարմանալի գործ մի գործուեցաւ այս աւուր մէջ, կ'առէ յիշեալ պատմագիրն : Այս երկիւղած և հաւատարիմ կին Ոյուշ գաւառէն՝ ունէր մի յոյժ պատուական և բաղձալի որդի, որ դէմքով հրեշտականման էր և հասակաւ եօթն կամ ութ տարեկան : Նշր Արեւելից հեթանոս եւ բարբարոս ազգաց զօրբերը խութայան վրայ բարձրացան, քրիստոնէնց շասերը ասս և անդ փախած ամբացած էին անտառներու և ծմակներու գալաքադողի անցերը : Անօրէնները տեմներով այս կ'արշաւէին քրիստոնէնց վրայ և կամեին գերել : Խակ ողբանիլ պրտասէր և երկիւղած մայրը յետ գաւանալով և առնելով, որ կը գան կը մօանեան չարագործները՝ մանուկը իր ձեռքէն առնելու, սուրը ձեռքն առաւ և իւր ցանկալի որդին մորթեց և իրեւ անմեղ գաւան պատարագեց իւսէր անմահ գառին Յիսուսի Քիչիւնոսի Քիստոնի : Խրկիւղած կինը իւր որդին փսխագարձ տուաւ երկնաւոր Հօրը, որ իւր միածին Որդին՝ Դառն անարատ պատարագեց զենլով և խռցելով սուրը Դառգութայի խաչի վրայ Աւ ինքը մանկան մայրը սակաւ ինչ յառաջ երթալով և մի բարձրաւանդակ քարի վրայ բարձրանալով ինքղինքը իւսէր վայր ընկեց և գոհութեամբ փառաւորելով Յիսուսի Քրիստոսի առաջարկութիւնը :

նունը՝ աւանդեց հոգին ո: | ՞նչ ամ բջութիւն , ինչ արիասրտութիւն և ինչ պանչելի նիւթ թատրերդութեան :

Ալ տեսնենք ահա , որ || չեցի կինը իւր պատիւը պահպանելու համար և սրդին ապագայ հաւատութացութենէ կամայլ չարիքներէ աղատելու հանո՞ւ աւելի լաւ կը համարի իւր որդուց հետ միասին զոհուիլ քան թէ կին դանի մասը բարբարուաց ձեռքը մատնուիլ և անպատի կետնը ունենալ :

Եթէ այս դիւցանուն կինը այժման || չեցի կամ Վ անցի կանանց հետ համեմատներ և տեղական նկարագրութեանցն եւս հաւատ ընծայենք , արգեօք Բ նշ ահագին անդունդ պիտի տեսնենք հին և նոր հայ կանանց մէջ : | ՞նչ ահագին տարբերութիւն սիրտ գտնենք հին || չեցի քաջուհւոյ և այժմեան Վ ասպուրական գաւառի հայ կանանց մէջ , որոց թու լամորթ կենաց նիստագիրը , ոյլ տեղական աւերանաց հետ , կը կարգանք Վ ասպուրականի աեղագրութեան մէջ , որ գրուած , ստորագրուած և զրկուած է | զգացին վարչութեան (1) . | ՞նչքան նախատական են հայութեան յարգը հանաչող անձանց համար աեղագրութեան այս խօսքերը թէ . “ Քիւրտերը Հայոց կանայքը գրեթէ իւրացուցած են ո . | թէ իրաւ է նոյն տեղագիրը և ոչ եղթերուաքաղ , աւելի լաւ էր որ | ասպուրականի կանանց և մարդկանց անունը շըմնէր աշխարհ երեսին , քան թէ այս տեսակ վատ և նախատական անուն կրէին : | թէ ստոյգ են | անայ և | ուշի տեղագրերը , մեծ ամօթ տեղական հայ բընակչաց , որոնք իրենց ցածութեան և տարբերութեան նկարագիրը հրապարակ կը հանեն առանց պատկառելու :

(1) Տէ Մասի թիւ 906 .

| թէ Քիւրտերը Հայերէն սակաւածիւ շըմնէին , եթէ (Սամանեան Տէրութիւնը Քիւրտերուն պաշտպան լինէր (որ այնպէս չէ) , դարձեալ Հայք չափանի տուկային որ իրենց մարդկային և կրօնական պատիւը իրենց աչքի առջև անարգուէին : || Որ քաղաքական կամ եկեղեցական օրէնք կը կապէ Հայուձեռքերը իւր անձը և սեպհականութիւնը պաշտպանելու համար ամեն մի չափ ործ գնենք , և պատմական ող ատենի առջև կարող են արդարանալ գաւառական պատմական կամարդ իրենց ցածութեան և վատաս սրտութեան համար քանի որ թէ Լրոն թէ փիլսոփայութիւն և թէ քաղաքակը թութութիւն միաբարբառ կը պարտաւորեն զմարդ իր խաւունքը , իր անհատական ու ազգային պատիւն և իր կրօնական անբծութիւնը կենք և մահուամբ պատշտանելու : | յն ժողովրդները , որոնք վիէ մինդիր չեն իրենց իրաւանցը , պատուցն և կոչմանը , իրենց կրօնական և ընտանեկան սրբութեանը , այն տեսակ ժողովրդները անասուններու երամակ են , քան թէ ժողովուրդ : | յու կարգէն են մեզ համար Տարօնոց և | ասպուրականի ներկայ հայ բնակիչները ; եթէ , ինչպէս ասացինք , ստոյգ են իրենց տեղագրութիւնքն : | բդարեւ մեծ վիշտ է մեզ այս խօսքերը արտասանել մեր արենակից և կրօնակից եղանակ համար , բայց աւելի լաւ է աժմէն արտասանել այս ազգային անզգայութիւնը , քան թէ ապագայ զերունդին թողուլ . աւելի լաւ է այժմէն կշտամբել . քան թէ ազգային պատմութեան գառն գատասանին թողուլ : | նէր | չեցի , Բաղվեցի , Ալերոցի , | անցի և Պայազացի ազգակիցները , եթէ կը փափաքին իրենց նախատինքը բառնալ և իրենց մարդկային կոչման համեմատ քրինաւոր անզ գրաւել պատմութօս :

մէջ, պարտաւոր են, ոչ թէ տղայի նման լալ, պառաւի նման անիծանել և ստրկաբար աղջազակել թէ Քիւրստերը այսպէս կ'ընեն, այնպէս կ'ընան, մենք չենք կարող դիմանալ, մենք պիտի գաղ թենք, և այլն այլ պարտական են իրենց կրօնի և ընտանեկան սրբութեան համար, իրենց մարդկային կոչման և արժանաւորութեան համար՝ պաշտպանողական սուրբը նախապատիւ համարել ստրկական վստավրութենէն, արի ական նախանձամինդրու թիւնը՝ արջայական լաց ու կոծէն և պատուաւոր մահը՝ անպատիւ կեանդէն։ Այս կը պատուիրեն օրէնք և մարդկութիւն, այս կը պահանջնեն իրաւունք և պարտք։

Ով ականջ ունի, թող լսէ, ով սիրու ունի, թող զգայ։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՍՏԱԼԱՑ

ՀԱՐԱՎԱԿՈՒԹԻՒՆ աեւ ԹԻՒ 6.

Հայրս յարմար առիթ համարել անոր Եւուկտի Տարերը տուաւ, իրեն քառանաց ժամերուն մէջ կարդալու։ Եա զանոնք տեսնելով և առանց ոչ մի բացառութեան կարօտութիւն ունենալու հասկնալով սկսաւ ինքն ալյօրինել, և այնքան յառաջացաւ, որ միշտ ներկայ կը գտնուէր այն շարաթական ժողովներուն, ուր Փարիզի բողը հանճարեղ անձինքը կը ժողովէին իրենց երկասիրութիւնները բերելու՝ կամ ուրիշները քննելու համար։ Եղբայրս այս ժողովոց մէջ նշանաւոր էր թէ քննութեան և թէ իրեն արդեանց համար, որովհետեւ ինքը

շարունակ նորանոր բաներ կամ իրացութիւններն մէ կն էր։ Այս կամառաց կամ ժողովոց մէջ իտաւ լիսցէն, Դերմանիային և ուրիշ օտար երկիրներէն զրկած խնդիրներ կային որոց իւրաբանչիւրին վկա եղասցր իւրեն կարծիքը յայտնեց, այնքան ճշգութեամբ որ սւրիշներէն մէկը չէր կարողացած։ Քանիպի այնպիսի կենդանի լուս մը ունէր անիկա, որ պատուհեցաւ երբեմն ուրիշներէն չը նշանը ուած սխալները՝ ինքը տեսաւ և պարզեց։ Այկայն այս բոլոր ուսմանց մէջ երկրաշափութեան միմիայն իրեն զրօնաց ժամանակ կը պարապէր, վասն զի լսուինական լեզուն կանոններու վկայ կը սովորէր, զոր Հայրս աւանձինն յօրինած էր։ Եւ որովհետեւ այս գիտութեան մէջ, իրեն այնքան եռանդեամբ վնառուած ճշմարտութիւնը կը գտնէր, ուստի ասոր վկայ այն պիսի գոհ գտնուեցաւ, որ բոլոր իւր մոտպրութիւնը դարձուց անոր վկայ, և այնպէս յառաջողիմութիւններ քրաւ անոր մէջ քիչ ժամանակէն, որ իւր տասն ու վեց տարին ինայթ ներս կայ ճառ մը գրեց, և այս մաքի այն պիսի մէծ ճիգ մը համարուեցաւ, որ ամեն մարդ կըսէր թէ Արքիմեթէս երկրաշափէն ի վեր երբէք այսպիսի կատարեալ գործ մը չը տեսնուեցաւ, և իմաստուն անձինքը կը խորհէին զանոնք տպելու, զի նաքա կ'ըսէին որ այն երկը միշտ զարմանալի պիսի ըլլայ, և նաև եթէ տպուէր որ այն ժամանակի մէջ ասիկա հնարողը տասն ու վեց տարեկան հասակին մէջ էր, աւելի այս պարագայս պիտի յաւելլնէր անոր արժանաւորութիւնը, բայց որովհետեւ եղբայրս՝ փառասիրութեան և համբաւոց տեսնքը իր մէջ չունենալով՝ արմէք չը տուաւ անոր շատ և այսպէս այս երկը չը տպուեցաւ։

Այս ժամանակներու մեջ եղբայրութանը լատիներէն և յունարէն կուտաներ և բաց ի յայսանէ, ճաշի ժամանակ և ճաշէն վերջը, հայրս երբեմն տրամաբանութեան և երբեմն բնագիտութեան և փիլիսոփայութեան ուրիշ մասանց վրայ կը խօսէր անոր, և այս է իրեն բոլոր ուսածները, առանց վարժառուն մը երթալու, և անոնց համար հօրմէս զառ ուրիշ վարժապետ չունեցաւ, նոյնպէս և յետոյ սովորածներուն համար. Հայրս՝ անոր այս պէս ամեն գիտութեանց մէջ ըրած յառաջադիմութեանց վրայ շատ կ'ուրախանար բայց քնչմարեց որ այն մեծ և շարունակեալ զրադումները այսպիսի փափուկ հասակի մէջ անոր առողջութեանը կարող էին շատ վիասել, և յիրաւի տասն և ութը տարեկան էր սկսաւ նա տկարանալ. Ի՞այց հիւանդութիւնը զոր նա կրդար, այն ատեն այնքան զօրաւոր զըլլալով, չկրցաւ զայն իւր սովորական զբազում ներէն արգիլել. այնպէս որ նա իւր տասնու ինը տարեկան հասակին մէջն էր երբ հնարեց թուաբանական գործին, որով ոչ թէ միայն առանց գրչի և առանց հաշուի գործիքներու կը կարողանայ մարդ կատարել հաշու ոյ ամեն տեսակները, այլ և առանց թուաբանութեան ոչ մի կանոնը գիտնալու, մարդ կընայ ընել բոլորը անվիշտ ճըշդութեամբ.

Այս գործը բնութեան մէջ իրեւ մէկ նոր բան համարուեցաւ. վասն զի մեքենայի վերածեց գիտութիւն մը որ մաքի մէջ կը գահակալէ. այնպիսի ըստ տուգութեամբ մը բոլոր համարողական գործողութիւնները ընելու միջոցը գտնելով, առանց խորհեցու. կարօտութիւն մը ունենալու. Այս աշխատութիւնը զինքը շատ հոգնեցուց ոչ թէ մոտածման և կամ շարժման համար

զոր առանց գիտուարութեան գտաւ, այլ այս բոլոր բաները (զանոնք) գործ ծաւորաց հասկրցնելու համար էլլի ասըն զի երկու սարուան մէջ հազիւայն կատարելութիւնը ստացաւ, ուր է հիմաց.

Ի՞այց այս հոգնութիւնն ու տկարութիւնը, զօրս ինքը քանի մը տարութեան մէջ ձգեցին. այնպէս որ շատ անգամ մէջ կ'ըսէր թէ՝ տասն ու ութը տարեկան հասակիս ասդին օր մը առանց ցաւի երբէք անցուցած չընկմա

Այսու ամենայնիւ այս ցաւերը շարունակ միօրինակ սաստկութեամբ շըլլալով, երբ մէկ քիչ կը հանդարատէին, իսկոյն նորա միաբն կըսկսէր նոր բան մը օրոնելու. Վհան երեք տարութեան շըջանը մօննելով, և թօրիչէլիին փորձերը տեսնելով, ինքն ալ յետոյ ուրիշ փորձեր հնարեց, զոր իրեն փորձառութիւնները կ'անուանեն, որ պարզապէս կ'ապացուցանէր թէ այն բոլոր ազգեցութիւնները, զոր մարդիկ մինչեւ այս ժամանակ դաստարկութե կը տային, օգին ծանրութենէն յառաջ կը գան. Այս գային գիտութեանց մէջ իրեն միաբը հոգնեցնոյ վերջին ըզը բազումը այս եղաւ, և թէպէտ յետոյ ակնելու հնարեց, սակայն ասիկայ առանց ջանադրութեան և առանց մը տաճելու գտնելուն համար, (ինչպէս տեղը պիտի ըսնենք,) մեր խօսքին չը հակառակիր. Այս փորձառութենէն ան միջապէս յետոյ, երբ տակաւին բան չըրս տարեկան հասակին չէր մտած, Այսուածային Նախակինամութիւնը այնպէս կամեցաւ որ նա բարեպաշտ տական գրուածքներ կարդարով, իւր միտքը լուսաւորէ. և ասով իմացաւ եղբայր թէ քրիստոնէկական կրօնը՝ կըսափակ զմարդ միայն Եստունց համար ապրիլ և ուրիշ առարկայ մը չու-

Նենալ բաց ՚ի անկէ, և այօ ճշմարտութիւնը իրեն այնքան յացանի օգտակար և հարկաւոր երեւցաւ . որ իւր բոլոր խուզարկութիւններն ու հետամնութիւնները վերջացնելով, և բոլոր ուրիշ գիտութիւններէն հրաժարէլով մի միայն այն մէկ բանին ըզ բաղկլ որոշեց : զոր Յիսուս օ՛քիտաս կ'անուանէ միայն իրիւոր (1), այն է ասու ու ածային ճշմարտութեանց և պատուիրանաց նուրիել իր կե անքը :

Կատուծոյ մէկ մասնաւոր պաշտպանութեամբը նա իր երիտասարդութեան ամեն տեսակ մոլութիւններէն ազատ էր մինչեւ այն ատեն, և մանաւանդ աւելի հեռի գտնուեցաւ այնպիսի մոլորտւթիւններէ, որ կրօնիք կը նայէին իրեն հետապրդրութիւնները բնական բաներու մէջ սահմանափառ կելով : Հատ անգամ ինձ կ'ըսէր՝ որ այս երախոյիքը ուրիշներու հետ հօրս կը պարուիմ . վասն զի ինքը զէպ ՚ի կրօնիքը շատ ակնածութիւն ցուցնելով մանկութենէ ներշնչած էր անէտ եղբարօս ալ ուսուցանելով անոր թէ : ինչ որ հաւատոյ կը վերաբերի անոր հնազանգելէ զատ անօգուտ է պատճառ որոնել :

Այն օրինակները՝ զօրս շարունակ մէկ հօրէ մը կ'ընդունէր, այս հօրէն, զոր կը սիրէր և կը պատուէր ՚ի բոլոր սրաէ, խորին տպաւորութիւն կ'ընէր իրեն մոտաց : Այնպէս որ լինչ լով ինչ ինչ մոլութիւններ կրօնական վարդապետութեան մասին, երբէք և ոչ մի կերպով վրդովեցաւ իրեն հաստատամնութիւնը, թէպէտ և ինքը տակաւին երիտասարդ էր . այլ նա որ ամեն բանի պատճառ կը վնասուէր :

(1) Մարթմ . Մարթմ . գու հոգառ և բազումիք զբաղեալ են, բայց ասու այխո ինչ ովագում մասն բարի ընտիեաց, զո ոչ բարձր ՚ի ամսուէ ։ Պակ . Ժ . 41 .

